

Ռճագիտությունը (կամ ռճաբանությունը) իբրև լեզվական գիտակարգ հնագույն պատմություն ունի: Այն հայտնի էր դեռևս անտիկ աշխարհում և կապվում էր ճարտասանական արվեստի՝ խոսքի կիրառական տարբեր դրսևորումների հետ: Սակայն, որքան էլ զարմանալի է, հայ իրականության մեջ ռճագիտական ուսումնասիրություններ մինչև 20-րդ դարի կեսերը ըստ էության չեն եղել: Հանդիպում են անտիկ հեղինակների հետևությամբ կատարված և ճարտասանական արվեստին առնչվող տարբեր դիտողություններ: Ռճաբանության, իբրև լեզվաբանական գիտակարգի, հիմնադրումը նոր ժամանակներում կապվում է երջանակահիշատակ ակադեմիկոս Գուրգեն Սևակի անվան հետ, որի՝ Ն. Ջարյանի «Արա Գեղեցիկ» դիցապատմական ողբերգության լեզվաոճական քննությունը մինչև այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը: 1956 թ. լույս է տեսնում Գ. Վահանյանի «Հայոց լեզվի ռճաբանության ձեռնարկը», որը թե նյութի ընդգրկումներով և թե ծավալով դուրս չէր գալիս դպրոցական ուսուցման շրջանակներից: Այնուհետև՝ 1984 թ. լույս է տեսնում Ս. Մելքոնյանի «Ակնարկներ հայոց լեզվի ռճաբանության» ուսումնասիրությունը, ապա 1990-91 թթ. տպագրվում է Պ. Պողոսյանի «Խոսքի մշակույթի և ռճագիտության հիմունքներ» ուսումնասիրական ձեռնարկը (երկու զրբով):

1990 թ. լույս տեսավ Գ. Ջահուկյանի և Ֆ. Խլղաթյանի «Հայոց լեզու, ռճաբանություն» դպրոցական դասագիրքը, իսկ 2000 թ.՝ Ա. Մարությանի «Հայոց լեզվի ռճաբանություն» ուսումնասիրությունը:

Ինչպես տեսնում ենք, վերջին շրջանում մեծացել է հետաքրքրությունը ռճագիտության նկատմամբ. ասվածը կիսատ կլիներ, եթե չնշեինք հայ գրողների ու նրանց լավագույն երկերի լեզվաոճական ուսումնասիրությունները: Դրանք ոչ միայն ի մի են բերում այս կամ այն հեղինակի ոճական առանձնահատկությունները, այլև օգնում են բացահայտելու հայերենի զարգացման ինչ-ինչ օրինաչափություններ:

Նման ուսումնասիրությունների թվին կարելի է դասել Բաֆֆու, Թումանյանի, Իսահակյանի, Ջոհրայի, Օիրվանզադեի, Բակունցի, Չարենցի, Սևակի և այլոց երկերի լեզվաոճական քննությունները:

Ահա այս ամենի համապատկերի վրա առանձնանում է Լևոն Եզեկյանի «Ռճագիտություն» ուսումնական ձեռնարկը, որը 2003 թ. լույս է ընծայել Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը: Այն նախատեսված է բանասիրական և հումանիտար բաժինների ուսանողների համար և առաջին փորձն է ամբողջական ներկայացնելու բուհական ծրագրով նախատեսված դասընթացը:

Գրքում մի զգալի հատված նվիրված է լեզվական և խոսքային ոճերի բնութագրմանն ու դասակարգմանը: Հեղինակի առավելությունը այս հարցում այն է, որ չի խճճվում տարաբնույթ տեսությունների ու հարցին անդրադարձող գիտնականների՝ հաճախ հակասական տեսակետների միջև, այլ ներկայացնում է դասակարգումների ներդաշնակ և հետևողական իր ըմբռնումները:

Ձեռնարկի կարևորագույն մասերից են նաև բառային, ձևաբանական և շարահյուսական ռճաբանությանը նվիրված բաժինները, որոնք կազմում են նյութի միջուկը և աչքի են ընկնում տեսական ու գործնական նոր, թարմ լուծումներով: Նույնը կարելի է ասել լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցներից նվիրված բաժինների մասին:

Ուշագրավ են ռճույթի ըմբռնման և խոսքային տարբեր ոլորտներում դրանց դրսևորման, լեզվական նորմայի, լեզվի, խոսքի ու ոճի՝ գրական ժանրերի ու ստեղծագործական մեթոդի հետ ունեցած փոխհարաբերությունների վերաբերյալ Լ. Եզեկյանի տեսակետները, ուր զգացվում է հեղինակի նորարարական մտտեցումը բազմիցս չարչրկված հարցերին:

Նման ծավալի ու ընգրկումների գիրքը, ինչ խոսք, չէր կարող զերծ լինել վրիպումներից ու բացթողումներից: Գրքի հետագա մշակման ընթացքում կցանկանա-

յինք, որ հեղինակը առավել մեծ ուշադրու-  
թյուն դարձնի հնչունային և, մանավանդ,  
շարահյուսական ոճաբանության հարցե-  
րին, որոնք մյուս հարցերի համեմատ անհը-  
րաժեշտ խորությամբ չեն ներկայացված:  
Վիճարկելի է նաև գրքի կառուցվածքը:  
Պահպանելու համար «հոմանշություն»  
երևույթի ամբողջական քննությունը՝ հեղի-  
նակը «Բառագիտական ոճաբանություն»  
բաժնում քննում է նաև քերականական և  
շարահյուսական հոմանիշները, մինչդեռ

դրանք, մեր կարծիքով, ճիշտ կլիներ քննել  
իրենց տեղում՝ «Քերականական ոճագի-  
տություն» բաժնում:

Այս ամենը մեզ իրավունք է տալիս ա-  
սելու, որ Լ. Եզեկյանի սույն գիրքը, իր մեջ  
ներառելով մինչ այդ եղած առաջավոր  
փորձը, միաժամանակ նոր խոսք է հայ ո-  
ճաբանական լեզվաբանության ասպարե-  
զում և, մանավանդ, բուհական դասագրքե-  
րի ստեղծման գործում:

**Ռ. Կ. ՍԱՔԱՊԵՏՈՅԱՆ**